ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-10/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան *09* **-ը մարտի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Օլանդա» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Ա. Վարոսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **18.11.2019թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-10/1-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***34,842,000 (երեսունչորս միլիոն ութ հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, ***բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Օլանդա» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, Մարալիկ, Գագարինի 29
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ, Շիրակի մ/ճ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 2478918854740000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 05528443
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ՎԱՐՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/1-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Հ/Մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումը՝ 2020թ	
						2-րդ եռամսյակ	3-րդեռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.09.2020թ.
1.	Աթոռակներ (Աթոռակ զինվորական մետաղյա կարկասով)	հատ	2500	5,394	13,485,000	1250	1250
2.	Ննջասենյակի կահույք (Մահճակալ զինվորական)	հատ	500	21,234	10,617,000	250	250
3.	Արշավի մահճակալներ (Մահճակալ ծալովի դաշտային)	հատ	500	21,480	10,740,000	250	250
Ընդամենը՝					**34,842,000**		

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/1-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գին /ՀՀ դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝								
				Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ.
1.	Աթոռակներ (Աթոռակ զինվորական մետաղյա կարկասով)	39111260/503	13,485,000	6,742,500	6,742,500	6,742,500	13,485,000	13,485,000	13,485,000	13,485,000	13,485,000	13,485,000
2.	Ննջասենյակի կահույք (Մահճակալ զինվորական)	39141170/512	10,617,000	5,308,500	5,308,500	5,308,500	10,617,000	10,617,000	10,617,000	10,617,000	10,617,000	10,617,000
3.	Արշավի մահճակալներ (Մահճակալ ծալովի դաշտային)	39522170/504	10,740,000	5,370,000	5,370,000	5,370,000	10,740,000	10,740,000	10,740,000	10,740,000	10,740,000	10,740,000
Ընդամենը			**34,842,000**	**17,421,000**	**17,421,000**	**17,421,000**	**34,842,000**	**34,842,000**	**34,842,000**	**34,842,000**	**34,842,000**	**34,842,000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

Հանրային ներդրումների նախարարություն
ՊՆ ԼՏՍ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Օլանդա» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՎԱՐՈՍՅԱՆ